ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱԲՐԻԵԼ ԽԱՆՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն լուսանկարիչ Գաբրիել Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ. 12 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԱԲՐԻԵԼ ԽԱՆՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լուսանկարիչ Գաբրիել Խանոյանը ծնվել է 1898թ. մայիսի 1-ին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Հաճախել է Վարագա վանքին կից դպրոցը:

Գաբրիել Խանոյանի մանկության և պատանեկության տարիներն անցել են Վանի Այգեստան թաղամասում, որտեղ ապրել է մինչ հայ ժողովրդի համար ողբերգական 1915թ. իրադարձությունները: Իր հայրենակիցների հետ միասին 17-ամյա Գաբրիելը, զենքը ձեռքին մասնակցել է Վան քաղաքի պաշտպանությանը:

Գաղթի ճանապարհին անցնելով՝ Խանոյանները հասել են Ռուսաստան, որտեղ և կայացել է նրա առաջին ծանոթությունը լուսանկարչական արվեստի հետ: Գեղեցիկը տեսնելու նրա ունակությունը նկատել են Կիսլովոդսկում աշխատող ռուս լուսանկարիչները, որոնց աշակերտել է ապագա լուսանկարիչը: 1934թ. Գաբրիել Խանոյանի ընտանիքը հաստատվել է Երևանում:

Նույն թվականին Երևանում՝ Սպայի տանը, հիմնվել է Խանոյանի լուսանկարչատունը: Երկու տարի անց իր գործը տեղափոխել է Աբովյան 12 հասցե: Կարճ ժամանակահատվածում Խանոյանի աշխատանքներն իրենց որակով և հետաքրքիր բովանդակությամբ գրավել են երևանցիների ուշադրությունը: Լուսանկարչատան առօրյա աշխատանքից զատ, Խանոյանն իր լուսանկարչական տեսախցիկի միջոցով հավերժացրել է քաղաքի բոլոր հիշարժան իրադարձությունները, նշանավոր մարդկանց այցելությունները Հայաստան:

Այսօր Խանոյանի գործերից շատերը պատմական են դարձել, որտեղ ներկայացված են 1930-1970թթ. Խորհրդային Հայաստանի ձևավորման ու զարգացման անցած ճանապարհը: Նույն թվականներին Գ. Խանոյանն աշխատել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական և Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոններում՝ հավերժացնելով Փափազյանի, Գուլակյանի, Ներսիսյանի և թատրոնի մյուս աստղերի բեմական կյանքը:

Գաբրիել Խանոյանը մահացել է 1981թ. Երևանում:

Լուսանկարիչ Գաբրիել Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ. 12 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հ. Ղազանչյանի, ՀՀ քաղաքացի Գ.Խանոյանի և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տ. Բարսեղյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱԲՐԻԵԼ ԽԱՆՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գաբրիել Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱԲՐԻԵԼ ԽԱՆՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գաբրիել Խանոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ